ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2021 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզում գործում են 161 հանրակրթական դպրոցներ, որոնցից 146-ը մարզային ենթակայության, 12-ը՝ ՀՀ ԿԳՄՍՆ և 3-ը ոչ պետական:

2021 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի դպրոցներ հաճախել են 31836 աշակերտ, որից 27522--ը՝ մարզային ենթակայության, 4053-ը՝ ՀՀ ԿԳՆ ենթակայության և 261-ը՝ ոչ պետական ուսումնական հաստատություններ:

2021-2022 ուսումնական տարում մարզի 65 դպրոցահեն նախակրթարաններ են հաճախում 933 սան, առաջին դասարանցիների թիվը կազմում է 3025 աշակերներ: Շրջանավարտների թիվը կազմել է 1754 աշակերտ, որից 831-ը մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դպրոցներից /հունվարի 1-ի դրությամբ/:

ԲՈՒՀ – երի ընդունելության հայտագրվել է՝ 1159 դիմորդ, ընդունվել՝ 832-ը /71,8%/, որոնցից 156-ը /18,7%/՝ առաջին անվճար հայտով: Առնվազն 1 միասնական քննության հայտագրվել է 978 դիմորդ /2021 թվ. հունիս/:

Մարզի բոլոր դպրոցները համալրված են դասագրքերով:

2021 թվականին 7-13 տարեկան 380 աշակերտ՝ Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և բազմազավակ ընտանիքների, մեկնել են Հանքավանի «Արագած» ճամբար՝ ամառային հանգստի:

Մեդալակիրների թիվ՝ 32 շրջանավարտ՝ առաջինը ՀՀ-ում:

Պատվաստված աշխատակիցները կազմում են 96%:

Մարզային ենթակայության դպրոցներում պարտադիր վերապատրաստում անցել են 680 ուսուցիչ, իսկ կամավոր ատեստավորման են մասնակցել 20 դպրոցների 25 ուսուցիչներ:

2021-2022 ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլերին մասնակցել են 2404 աշակերտներ, մարզային փուլին կմասնակցի 1058 աշակերտ:

Մարզի 13 դպրոցներում ջեռուցումը իրականացվում է հեղուկ վառելիքով ՝ վառարանների միջոցով:

2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական ծրագրերը կատարվել են 100%-ով:

Ուղղությունը ֆիզկուլտուրա և սպորտ

Շիրակի մարզում գործել են մարզական պարապմունքներ անցկացնող 47 կազմակերպություններ, այդ թվում. 1՝ քոլեջ, 31՝ մարզադպրոց, 4՝ ակումբ, 4՝ մասնաճյուղ, 5՝ բաժանմունք և 2՝ կենտրոն: Նշված կազմակերպություններում հաշվառված են 7634 պարապողներ, որոնց հետ ուսումնամարզական գործընթաց են կազմակերպում 450 մարզիչ–մանկավարժներ:

Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված և սամբո մարզաձևերից՝ «Մրցաշրջան–2021»–ի օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին ու միջազգային պաշտոնական մրցումներին ՀՀ հավաքական թիմերի կազմերում մասնակցել են Շիրակի մարզի 107 ներկայացուցիչներ, որոնք նվաճել են 22՝ ոսկե, 31՝ արծաթե և 26 բրոնզե մեդալներ.

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ	Մասնա–կից				ԸՆԴ.
Օլիմպիական խաղեր	3	-	1	1	2
Աշխարհի առաջնություն	15	-	2	2	4
Աշխարհի U-23 առաջնություն	3	-	-	1	1
Աշխարհի երիտասարդական առաջնություն	8	1	3	1	5
Աշխարհի պատանեկան առաջնություն	5	1	-	1	2
Ընդամենը աշխարհի առաջնություններում	31	2	5	5	12
Եվրոպայի առաջնություն	9	1	1	2	4
Եվրոպայի U-23 առաջնություն	7	2	2	-	4
Եվրոպայի երիտասարդական առաջնություն	12	3	2	1	6
Եվրոպայի պատանեկան առաջնություն	15	2	2	-	4
Եվրոպայի U-15 առաջնություն	8	1	1	4	6
Ընդամենը Եվրոպայի առաջնություններում	51	9	8	7	24
ԸՆԴԱՄԵՆԸ	85	11	14	13	38
Ծանրամարտի փոքր մեդալներ՝ ԱԱ-ներում	–	1	4	3	8
Ծանրամարտի փոքր մեդալներ՝ ԵԱ-ներում	–	9	10	5	24
Ընդամենը ծանրամարտի փոքր մեդալ	–	10	14	8	32
Աշխարհի գավաթ	4	–	1	–	1
Բանակայինների աշխարհի առաջնություն	6	-	-	3	3
Եվրոպայի փոքր երկրների առաջնություն	7	1	1	1	3
ԱՊՀ երկրների մարզական խաղեր	5	-	1	1	2
Ընդամենը	22	1	3	5	9
ԸՆԴԱՄԵՆԸ	107	22	31	26	79

Հայաստանի 2021 թվականի 10 լավագույն մարզիկների կազմում ընտրվեցին մարզի 5 մարզիկ՝

1.Արթուր Ալեքսանյան–հունահռոմեական ըմբշամարտ
2.Հովհաննես Բաչկով–բռնցքամարտ
3.Դավիթ Չալոյան–բռնցքամարտ
4.Վարազդատ Լալայան–ծանրամարտ
5.Գոռ Մինասյան–ծանրամարտ

Մարզական և մարզական–զանգվածային միջոցառումներ ու տոնահանդեսներ

Կազմակերպվել և անց են կացվել.

– Շիրակի մարզի պատանեկան առաջնություններ՝ ազատ ըմբշամարտ, բռնցքամարտ, ծանրամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, շախմատ, սամբո, մարմնամարզություն, ֆոտզալ և ֆոտբոլ մարզաձևերից։

–«Ամասիայի ձմեռ» և «Անիի ձմեռ» մարզամշակութային տոնահանդեսներ,

–ՀՀ պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության մրցույթի ծրագրով Շիրակի մարզպետարանի, Գյումրու, Արթիկի և Ախուրյանի համայնքապետարանների ընտրական փուլերի մրցումներ,

–«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» թեստային մրցույթ դպրոցականների շրջանում,

– ՀՀ դպրոցականների շախմատի 15–րդ օլիմպիադայի ներդպրոցական, համայնքային–տարածաշրջանային և մարզային փուլերի մրցումներ,

–Հուշամրցաշարեր՝ նվիրված 44–օրյա պատերազմում հերոսացած զինծառայողների հիշատակին,

–ՀՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկության ներդպրոցական և մարզային փուլերի մրցումներ։

Աջակցություն է ցուցաբերվել մարզի տարածքում կազմակերպված հանրապետական առաջնությունների և մրցաշարերի կազմակերպմանն ու անցկացմանը.

– Դահուկավազքի ՀՀ առաջնություններ,

–Սպորտային ակրոբատիկայի ՀՀ առաջնություն,

–Սպորտային մարմնամարզության ՀՀ պատանեկան առաջնություն,

–«Gyumri open» շախմատի պատանեկան հանրապետական մրցաշար,

– Հուշամրցաշարեր նվիրված 44–օրյա պատերազմում հերոսացած զինծառայողների հիշատակին՝ ծանրամարտ, բռնցքամարտ և ըմբշամարտ մարզաձևերից,

–ՀՀ դպրոցականների շախմատի 15–րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլի մրցումներ։

Ապահովել է Շիրակի մարզի թիմերի մասնակցությունը.

–Տարբեր մարզաձևերից ՀՀ առաջնությունների մրցումներին՝

Միջոցառման անվանումը				Ընդամենը մեդալ
ՀՀ մեծահասակների առաջնություն	42	43	47	132
ՀՀ երիտասարդական առաջնություն	30	18	33	81
ՀՀ պատանեկան առաջնություն	81	77	60	218
	153	138	140	431

– ՀՀ պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության եզրափակիչ մրցույթին, /Գ.Գրիգորյան, Շիրակի մարզպետարան՝ 1–ին տեղ, Ախուրյանի համայնքա–պետարանի կանանց թիմ՝ 1–ին տեղ, Ն.Նահապետյան, Ախուրյան՝ 3–րդ տեղ/,

–ՀՀ վարչապետի գավաթ՝ սիրողական հեծանվավազքի մրցաշարին,

–ՀՀ վարչապետի գավաթ՝ կրոսավազքի մրցաշարին/ Սոս Հարությունյան՝ 1–ին տեղ, Մարի Սարգսյան՝ 2–րդ տեղ, Լիլիթ Մկրտչյան՝ 3–րդ տեղ, Երվանդ Մկրտչյան՝ 1–ին տեղ, Վարազ Աբաջյան՝ 2–րդ տեղ/,

–ՀՀ դպրոցականների շախմատի 15–րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլի մրցումներին,

–Դպրոցականների ֆուտբոլի հանրապետական առաջնությանը/մինչև 12 տարեկան–ների առաջնությունում հաղթող ճանաչվեց Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցի թիմը/։

–«Կայուն զարգացման հայկական հիմնադրամ» –ի և «Երեխաների համար ՈՒԵՖԱ հիմնադրամ»–ի կողմից համատեղ կազմակերպված «Սպորտային սերունդ» –2021 ծրագրով լավագույններ են ճանաչվել և 1 մլն ՀՀ դրամ արժողությամբ նոր մարզագույքի արժանացել Գյումրու թիվ 7 հիմնական և Լանջիկի միջնակարգ դպրոցները։
–ՀՀ ԱզգայինԺողովի գավաթի հանրապետական եզրափակիչ մրցումներին/Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոցի 4–րդ դասարանի թիմ՝ 3–րդ տեղ/։

Իրավական հսկողություն է իրականացվել ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ.
1–ին եռամսյակ՝ Գյումրի, Հոռոմ, Հայկավան։
2–րդ եռամսյակ՝ Հովտաշեն, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բայանդուր։
3–րդ եռամսյակ՝ Անուշավան, Սարալանջ, Ղարիբջանյան, Գետափ։
4–րդ եռամսյակ՝ Պեմզաշեն, Աշոցք, Նահապետավան։

Մարզակառուցների հիմնակառուցում, հիմնանորոգում և վերանորոգում
–2021 թվականի մայիսի 17–ից «Գրիգորյան Շին» ՍՊԸ–ի կողմից մեկնարկեցին Գյումրի համայնքի Ա.Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման շինարարական աշխատանքները,
–Գյումրու համայնքապետարանի համալիր, ջրային մարզաձևերի, հունահռոմեական ըմբշամարտի, սամբո–ձյուդոյի, մարմնամարզության, մարզախաղերի և բռնցքամարտի մարզադպրոցների վերանորոգում,
–Արթիկի մարզահամալիրի վերանորոգում և ջեռուցման համակարգի տեղադրում,
–Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոցի մարզադահլիճների վերանորոգում,
–Սպանդարյանի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերանորոգում,
–ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4–ի N1802-Ա որոշմամբ Գյումրու Չարենցի փողոց 4 հասցեում գտնվող նախկին գիշերօթիկ հաստատության 2762.4 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքը անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով ամրացվեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ–ին։

Ոլորտի հիմնախնդիրները
–Գյումրիում սպորտային բժշկության կենտրոնի, կաբինետի բացակայությունը,
–Մարզադպրոցներում և հանրակրթական դպրոցներում մարզագույքի սակավությունը։
–Հանրակրթական շուրջ 60 ուսումնական հաստատություններում մարզադահլիճի բացակայությունը։

Ուղղությունը մշակույթ

ՀՀ Շիրակի մարզի մշակույթի ոլորտում 2021 թվականին իրականացված ծրագրերը նպատակ են ունեցել բարձրացնելու մշակույթի դերն ու պահպանելու ազգային մշակութային արժեքները:

Հաշվետու ժամանակահատվածում /01.01.2021-30.12.2021/ իրականացվել է պետական մշակութային քաղաքականությունը ՀՀ Շիրակի մարզում, մարզպետի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը:

Համակարգվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող 5 /«Գյումրու ժող. գործիքների նվագախումբ», «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ», «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան», «Շիրակի երկրագիտական թանգարան» և «Ամասիայի մանկական արվեստի դպրոց»/ մշակութային հաստատությունների գործունեությունը, ինչպես նաև մարզի համայնքներում իրականացվել են պետական, ազգային և այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ:

Իրականացվել են մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման նկատմամբ օրենքով սահմանված լիազորություններ, մշակույթի բնագավառում վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Հոռոմ, Հայկավան, Հովտաշեն, Մեծ Մանթաշ, Նորկյանք, Բայանդուր, Անուշավան, Սարալանջ, Ղարիբջանյան, Գետափ, Պեմզաշեն, Աշոցք, Նահապետավան համայնքներում:

Վերահսկողություն է իրականացվել՝

- Մարզի տարածքում հուշարձանների պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, միջոցներ ձեռնարկվել մարզի տարածքում հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ:
- Գեղարվեստական կրթության որակի բարձրացմանը, ազգային, լարային, փողային նվագարանների ուսուցման գծով վարձավճարների փոխհատուցման աշխատանքների վերահսկմանը /«Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման» պետական ծրագրում ընդգրկված 19 երաժշտական և արվեստի դպրոցներում սովորող թվով 377 աշակերտներ ստացել են ուսման վարձավճարի փոխհատուցում/:

Քանի որ 2019 թվականի նոյեմբերի 25-ին Փարիզում ընթացող ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր կոնֆերանսի 40-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է որոշում՝ ընդգրկելու կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյա հոբելյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հոչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2020-2021 թթ. օրացույցում:

2021 թվականի ընթացքում մարզի նվագախմբերի կողմից, ինչպես նաև երաժշտական և արվեստի դպրոցներում առանձնահատուկ հանդիսավորությամբ անց են կացվել Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառումներ:

Գյումրու Սիմֆոնիկ պետական նվագախումբը հանդես է եկել հոբելյանական համերգներով՝ նվիրված կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանի 150, Էդվարդ Միրզոյանի 100 և Լյուդվիգ Վան Բեթհովենի 250 ամյակներին, Գյումրու ժող. գործիքների պետական նվագախումբը՝ Խաչատուր Ավետիսյանի 95 ամյակին:

Տարվա ընթացքում պարբերաբար աջակցություն է ցուցաբերվել պետական ծրագրերով նախատեսված միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպմանն ու անցկացմանը, հանրապետական եզրափակիչ փուլերին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովմանը:

«Զվարթնոց վերածննդի» հիմնադրամին աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Շիրակի մարզում «Զվարթնոց» խորագրով հայ դասական, ժողովրդական, հոգևոր երգի պահպանում ու տարածում» ծրագիրի կազմակերպման և իրականացմանը, որի գլխավոր նպատակն է հայ երիտասարդներին վերադարձնել իրենց ակունքներին, հասանելի դարձնել նրանց հայ մշակույթը, խրախուսել փառատոնի մասնակիցներին դառնալ հայ մշակույթի կրողներ և տարածողներ:

Նոյեմբերի 25-ին տեղի է ունեցել «Զվարթնոց» խորագրով «Հայ դասական, ժողովրդական, հոգևոր երգի պահպանում ու տարածում» ծրագրի Շիրակի մարզի համայնքային փուլը, որին մասնակցել են մարզի 8-32 տարեկան նախապես հայտագրված երաժշտության ասպարեզում սկսնակ կատարողները գրեթե բոլոր համայնքներից, հաղթողները դեկտեմբերի 17-ին մասնակցեցին մարզային եզրափակիչ փուլին, որից հետո լավագույնը ճանաչված մասնակիցները 2022-ին կմասնակցեն փառատոնի եզրափակիչ փուլին:

Գյումրու «Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ում ապրիլի 18-ին Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակներում կազմակերպվել են թանգարանի տարածքի մաքրման աշխատանքներ:

Մայիսի 18-ին ՀՀ Շիրակի մարզի թանգարաններում «Թանգարանների միջազգային օր» և «Թանգարանների գիշեր» ակցիայի շրջանակներում «Թանգարանների ապագան. վերականգնել և վերաիմաստավորել» խորագրի ներքո կազմակերպվել և անց են կացվել մի շարք միջոցառումներ:

Հուլիսի 5-ին մարզի գրեթե բոլոր համայնքներում անց են կացվել ՀՀ սահմանադրության օրվան և պետական խորհրդանիշերի հանրահռչակմանը նվիրված միջոցառումներ՝ տոնական քայլերթ և համերգ, որին մասնակցել են մարզի ԲՈՒՀԵ-երի ուսանողները:

Սեպտեմբերի 21-ին մարզում կազմակերպվել և մեծ շուքով անց են կացվել ՀՀ Անկախության տոնին նվիրված համապետական միջոցառումների շարքում ընդգրկված բազում միջոցառումներ:

Սեպտեմբերի 25-26-ը ՀՀ Շիրակի մարզի մշակութային օջախները միացել են «Համընդգրկուն ժառանգություն» համաեվրոպական խորագրի ներքո Հայաստանի Հանրապետությունում անցկացված Եվրոպական ժառանգության օրերի միջոցառումների շարքին:

Մարզի տարբեր հաստատություններում գործող թատերախմբերը մասնակցել են «Նռան հատիկ-2021» հանրապետական մանկապատանեկան թատերական 21-րդ փառատոնին:

Դեկտեմբերի 17-ին Գյումրու երաժշտական և արվեստի դպրոցների շնորհալի աշակերտները Երևանի Ա. Բաբաջանյան համերգասրահում հանդես են եկել համերգով:

Դեկտեմբերի 19-ին կայացել է Գյումրու երաժշտական և արվեստի դպրոցների տարեվերջյան հաշվետու համերգը:

2021 թվականին շարունակվել է դեռևս 2018 թվականի նոյեմբերին մեկնարկած դպրոցական բաժանորդային ծրագիրը, որին մասնակցել և հավուր պատշաճի ծառայություններ է մատուցել ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը», ինչպես նաև 2019-ից ծրագրում ընդգրկված ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող «Գյումրու ժող. գործիքների նվագախումբը» և «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբը», ինչպես նաև 2021 թվականից ծրագրին միացել են Գյումրի համայնքի ենթակայությամբ գործող թնգարաններն ու Ստ. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնը: Տարվա ընթացքում դպրոցական բաժանորդային ծրագրում ընդգրկված մշակութային հաստատությունները աբոնեմենտային տոմսերով սպասարկել են հանրապետության ողջ տարածքից մարզ այցելող 28 123 աշակերտ և ուսուցիչ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող՝

- Ամասիայի մանկական արվեստի դպրոցը տարվա ընթացքում իրականացրել է դպրոց հաճախող սաների գեղարվեստական դաստիարակությունը, դպրոցի աշակերտներն հանդես են եկել ցուցահանդեսներով, հաշվետու և հոբելյանական մի շարք համերգներով:
- Գյումրու սիմֆոնիկ նվագախմբի կողմից իրականացվել է 42 համերգ՝ 9102 հանդիսատեսի համար:
- Գյումրու ժող. գործիքների նվագախմբի կողմից իրականացվել է 69 համերգ՝ 12900 հանդիսատեսի համար:
- Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը գիտա-լուսավորչական, մասսայական, կազմակերպչական աշխատանքների գծով ընդունել է 20000 այցելու, տարվել է 1742 էքսկուրսիա, անցկացվել 11 ցուցահանդես և միջոցառում:
- Շիրակի երկրագիտական թանգարանը պատրաստել է 60 նյութերի գրչանկարներ և տախտակներ: Հետազոտվել է Շիրակի մարզի պալեոլիթի, Շիրակավանից, Ազատանից, Մեծ Սեպասարից, Ջրաձորից և Ջրափիից հայտնագործված հնագիտական նյութերը, որոնց մի մասը ենթարկվել է կամերալ մշակման, իսկ խեցե նյութերը վերականգման ընթացքում են: Ուսումնասիրվել է Շիրակի մարզի բնակչության սոցիալական կազմի, բնական վերարտադրության և Հարավային Կովկասի բնակչության էթնիկական կազմի փոփոխությունները պատմաազգագրական տեսանկյուններից, իրականացվել են հնագիտական պեղումներից հայտնաբերված 120 թրծակավե ցուցանմուշների վերականգման աշխատանքներ: Թանգարանի գիտական անձնակազմը աշխատում է Մեծ Սեպասարի, Ջրաձորի և Ջրափիի 2021 թվականի հնագիտական պեղումների գիտական հաշվետվությունների և Շիրակի մարզի ազգագրական ուսումնասիրու-թյունների հոդվածների նախապատրաստման ուղղությամբ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ